# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 54

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՄԱՂԱՔ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Զառիթափ համայնքի ավագանու 22 հունիսի 2020 թվականի թիվ 39 որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ.-ի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշմամբ հաստատված կարգի 46.2 կետի «ա» ենթակետով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2387- Ն որոշմամբ, ***որոշում եմ՝***

1. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի բնակիչ Մաղաք Նաիրիի Հովհաննիսյանին Զառիթափ բնակավայրի 3 փողոց 7 հասցեի շինության հարակից տարածքում կառուցապատման իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրել 2,5 քմ հասարակական կառուցապատման հողատարածք՝ առկա շինության ընդլայնման համար:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասը հասցեավորել Զառիթափ համայնք Զառիթափ բնակավայր 3 փողոց 7/5 հասցեում:

3. Քաղաքացի Մաղաք Հովհաննիսյանի հետ կնքել հողամասի կառուցապատման իրավունքի պայմանագիր:

4. Հողատարածքի վարձավճար սահմանել 1000 դրամ:

5. Շինարարությունը սկսել քաղաքաշինական փաստաթղթերի առկայության դեպքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈՒՆԻՍԻ 2020թվականի N 55

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 23 ՀՈՒՆԻՍԻ 2020 Թ.-Ի ԹԻՎ 52 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ***որոշում եմ՝***

1. Զառիթափ համայնքի ղեկավարի 23 հունիսի 2020 թ.-ի թիվ 52 որոշման բովանդակության մեջ «համայնքային սեփականություն» բառերը փոխարինել «պետական սեփականություն» բառերով, այնուհետև՝ ինչպես տեքստում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
# ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

20 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 56

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲԱԺԱՆՎՈՂ 0.09335
ՀԱ ՀՈՂԱՏԵՍՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, ***որոշում եմ՝***

Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի՝ ծածկագիր՝ 10-022-0094-ից բաժանվող 0,09335 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատեսքը հասցեավորել Զառիթափ համայնք Զառիթափ բնակավայր 7 փողոց 16 հասցեում:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 57

## ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին պարբերության 3-րդ կետի և 4-րդ պարբերության 1-ին կետի պահանջներով, և հիմք ընդունելով Զառիթափ համայնքի ավագանու 31.01.2019թ.-ի 13-Ն որոշումը, ***որոշում եմ՝***

Համայնքի բյուջեից ներքոհիշյալ բնակիչներին հատկացնել 450000 /չորս հարյուր հիսուն հազար/ դրամ ընդհանուր գումարով դրամական օգնություն /սոց. նպաստ /՝ յուրաքանչյուրին հետևյալ չափերով.

| | | |
|---|---|---|
| 1. Ժորա Սայադյան | 30000 | դրամ |
| 2. Կարինե Միքայելյան | 30000 | դրամ |
| 3. Ծովիկ Ավագյան | 30000 | դրամ |
| 4. Արսեն Մկրտչյան | 25000 | դրամ |
| 5. Սրբուհի Եղիազարյան | 25000 | դրամ |
| 6. Նելսոն Մինասյան | 20000 | դրամ |
| 7. Գարեգին Հովհաննիսյան | 25000 | դրամ |
| 8. Սոս Մուրադյան | 25000 | դրամ |
| 9. Մանուկ Մանուկյան | 25000 | դրամ |
| 10. Ասյա Խաչատրյան | 20000 | դրամ |

11. Մնացական Վարդանյան 25000 դրամ

12. Վալերա Ավագյան 25000 դրամ

13. Ռուզաննա Ալեքսանյան 25000 դրամ

14. Ժենյա Ղամբարյան 30000 դրամ

15. Մուրադ Մուրադյան 20000 դրամ

16. Սուսաննա Աղջոյան 70000 դրամ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru,


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 58

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1.88387 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 16-րդ կետով և հիմք ընդունելով Մրցույթային հանձնաժողովի 28.07.2020թ. թիվ 10 արձանագրությունը, ***որոշում եմ՝***

1. Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 1.88387 հա / ծածկագիր՝ 10-022-0238-0056/ արոտավայրը 16300 /տասնվեց հազար երեք հարյուր/ դրամ տարեկան վարձավճարով՝ 25 /քսանհինգ/ տարի ժամկետով վարձակալությամբ տրամադրել Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի բնակիչ՝ Արտուշ Խաժակի Դավթյանին:
2. Արտուշ Դավթյանի հետ կնքել հողամասի վարձակալության պայմանագիր՝ ապահովելով գույքային իրավունքների պետական գրանցումը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru,


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 59

### ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՌԻԹԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 0.04334 ՀԱ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով, ***որոշում եմ՝***

Զառիթափ համայնքի Զառիթափ բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող, ծածկագիր՝ 10-022-0214-հց 0.04334 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Վայոց Ձորի մարզ, բն.Զառիթափ, (0282) 91507, zaritapi.gyughapetaran@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 60

ԶԱՌԻԹԱՓ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 0.48207 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ԱՌԱՆՁԻՆ ՄԻԱՎՈՐ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետով, ***որոշում եմ՝***

Զառիթափ համայնքի Մարտիրոս բնակավայրի համայնքային սեփականություն հանդիսացող, ծածկագիր՝ 10-033-0162-ից 0.48207 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը գրանցել որպես առանձին միավոր՝ համայնքային սեփականություն:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ**